Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:
/ ՀՀ Սահմանադրություն, հոդված 38,մաս 1/

ՀՀ Շիրակի մարզի <<Ամասիայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը կազմվել է՝ հաշվի առնելով միջնակարգ կրթության ոլորտին վերաբերող ՀՀ նորմատիվ-իրավական ակտերով սահմանված՝ միջնակարգ կրթության ոլորտում պետական քաղաքականության և միջնակարգ կրթության չափորոշման ու զարգացման դրույթները: Ծրագրի մշակման մեթոդաբանական հենք են հանդիսացել, մասնավորապես՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը , շրջանակը (1-ին, 2-րդ և 4-րդ Հանրակրթության պետական չափորոշիչը:

Պահպանված են զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը:

Ծրագրի կազմման համար հիմք է հանդիսացել դպրոցի 2016-2021 թթ. զարգացման ծրագիրն ու կատարված աշխատանքների վրա հիմնված՝ հետագա անելիքները :

Հաստատության գործունեության առանձին ոլորտներ ենթարկվել են վերլուծության,հստակեցվել են նպատակներն ու դրանց հասնելու ուղիները:

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Առաքելությունը կազմակերպության ցանկալի ապագայի մտապատկերն է:

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար:
Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:
Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը:
ՀՀ անկախության հռչակումից հետո սկսվել են իրականացվում են կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք հնարավորություն են տվել լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու զարգացման համար:
ՏՀՏ տեխնոլոգիաների,տեղեկատվական հոսքերի դարաշրջանում խիստ կարևոր է ժամանակին համահունչ քայլելը,արմատական փոփոխություններ կատարելը:

Զարգացման ծրագիրը հնարավորություն է տալիս փոփոխությունների աստիճանական իրականացման,անձի՝հասարակության և պետության շահերից բխող ուսուցման և զարգացման:Կրթության բովանդակության բաղադրիչները անմիջականորեն կապված են դպրոցի առաքելության հետ և այն միտված է դրանց իրագործմանը:

Մեր օրերում և՛ հասարակական գիտակցության, և՛ պետական քաղաքականության մեջ կրթությունը, հատկապես՝ որակյալ կրթությունը և դաստիարակությունը շարունակում են մնալ գերակայությունների շարքում՝ որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գործոն:

Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը:

Զարգացման ծրագիրը միտում ունի ստեղծել հնարավորություններ կամ զարգացնել առկա հնարավորությունները,որպեսզի օժտված,զարգացման,առաջընթացի տարբեր աստիճաններում գտնվող աշակերտները ունենան հնարավորություն ինքնադրսևորման,զարգացման:

Հարկ եղած դեպքում՝ իրականացնել խորացված ուսուցում կամ ճիշտ ուղղորդել համապատասխան պոտենցիալ ունեցող աշակերտին մասնագիտական կողմնորոշման հարցում:Կարևոր է շահառու խմբերի ներգրավումն այս գործում,հաշվետվողականության բարձրացումը,նպատակների,դրանց հասնելու ուղիների ճիշտ ընտրությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ նշենք,որ Ամասիայի միջնակարգ դպրոցն ունի իր առաքելությունն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանները:

1.Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ

Ամասիայի միջնակարգ դպրոցը կառուցվել է 1937 թվականին, գտնվում է Ամասիա համայնք, գ. Ամասիա, 24 փողոց, փակուղի 1, շենք 3հասցեում:

Դպրոցն իրավունք ունի իրականացնելու միջնակարգ՝ հանրակրթական ծրագիր՝ լիցենզիա N^0 2701 Գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետ-ռեգիստրի տարածքային բաժնում 2003 թվականին: Դպրոցի փոփոխված կանոնադրությունը հաստատվել է 2011 թվականին:

Շենքը երկհարկանի է, տիպային, ունի 2 մասնաշենք, որոնք վերանորոգվել են 2007-2009թթ: Դպրոցում առկա են մարզադահլիճ, արհեստանոց, շախմատի սենյակ, գրադարան, համակարգչային սենյակ, <Արմաթ> լաբորատորիա, բնագիտական առարկաների 2 լաբորատորիա, ռազմագիտության նյութերի, պարագաների համար նախատեսված սենյակ, կաթսայատուն: Ունի հարակից այգի: Ջրամատակարարումը շուրջօրյա է, առկա է սանհանգույց, ջեռուցվում է կաթսայատան միջոցով/բնական գազ/:Պատուհանները հիմնականում փայտյա են (բացառությամբ հյուսիսային կողմում գտնվող մի քանի դասասենյակի), ճաշարանը գազաֆիկացված չէ:

2009 թվականից դպրոցը կապիտալ վերանորոգման չի ենթարկվել, սակայն ամենամյա մասնակի վերանորոգման աշխատանքներն ու հետևողականությունը հնարավորություն են տվել մինչ օրս ունենալու հնարավորինս բարեկարգ շենքային պայմաններ:

Դպրոցի հաշվեկշռի վրա առկա է նաև հին մասնաշենք, որը այս պահին չի գործում, որևէ այլ նպատակներով օգտագործման պիտանի չէ, եթե չվերանորոգվի:

Անձնակազմը ներկա պահին կազմված է 27 հոգուց, որից 22-ը մանկավարժներ են: Դպրոցի բոլոր հաստիքները զբաղված են բացառությամբ՝ ֆիզկուլտուրայի և ռուսաց լեզվի, որոնց համար հայտարարված են մրցույթներ:Դպրոցում այս պահին սովորում են 214 աշակերտներ:

2.Հաստատության գործունեության վերլուծություն և նպատակադրման ոլորտներ

ա/Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան:

Ուսումնական միջավայրը,շենքային բարենպաստ պայմանները կարևոր գործոն են ուսումնառության արդյունավետ իրականացման համար:

Չնայած այն հանգամանքին,որ 2009 թվականից դպրոցը կապիտալ վերանորոգման չի ենթարկվել, շենքային պայմանները հնարավորինս բարեկարգ են՝շնորհիվ թերությունների ժամանակին վերացման, կանխարգելման և դպրոցական գույքի նկատմամբ պահպանողական վերաբերմունքի: Տնտեսված ֆինանսական միջոցների, բարեգործական կազմակերպությունների, աշակերտների նախաձեռնողականության շնորհիվ ձեռք են բերվել տեխնիկական միջոցներ:
Բարեգործական հիմունքնորով տեղադրվել են արևային էնորգակիրներ, որոնց հնարավորություններն ու արդյունավետ օգտագործման պայմանները հստակեցված չեն:

Նյութատեխնիկական բազան

Ամասիայի միջնակարգ դպրոցում առկա նյութատեխնիկական բազան հնարավորություն է տալիս աշակերտներին զարգանալու, ձեռք բերելու ժամանակակից մարդուն հատուկ գիտելիքներ, տիրապետելու ՏՀՏ տեխնոլոգիաներին: Համակարգչային սենյակում առկա են թվով __12__ համակարգիչներ, նոթբուք, Հեռավար կրթություն իրականացնելու նպատակով՝ դպրոցին տրամադրվել են նաև պլանշետներ:

Դպրոցն ունի <<ԱՐՄԱԹ>> լաբորատորիա, որը նպաստում է աշակերտների տեղեկատվական գրագիտության զարգացմանը:

Համակարգիչներ առկա են ոչ միայն համակարգչային դասասենյակում,այլ նաև ուսուցչանոցում,հաշվապահի կաբինետում:

Բնագիտական առարկաների լաբորատորիայում առկա են լաբորատոր սարքավորումներ:

Բարեգործական միջոցներով էապես թարմացվել է ֆիզիկայի լաբորատորիայի լաբորատոր գույքը, ինչը մեծապես նպաստում է ուսուցման որակի բարձրացմանը:

Աշակերտների և ուսուցիչների նախաձեռնողականության շնորհիվ ձեռք է բերվել պրոեկտոր,որն օգտագործվորմ է միջոցառումների,բաց դասերի արդյունավետությունն ու դիտողականությունը ապահովելու նպատակով:

Դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի վերլուծություն

Ուժեղ կողմեր	Դպրոցի շենքային պայմանները թե՛ ամռան, թե՛ ձմռան ամիսներին նպաստավոր են կրթական գործընթաց իրականացնելու համար:Ձմռանը ջերմային անհրաժեշտ ռեժիմը պահպանվում է միայն դասասենյակներում: Դպրոցը հնարավորինս ապահովված է այնպիսի նյութատեխնիկական բազայով,որը հնարավորություն է տալիս աշակերտներին զարգանալու,համագործակցելու,զանազան հմտություններ ձեռք բերելու: Համակարգչային դասասենյակը հնարավորություն է տալիս հետաքրքիր դասեր կազմակերպելու: Մարզադահլիճի՝ մարզագույքով ապահովվածության շնորհիվ՝ աշակերտների մոտ սպորտի ուղղությամբ գնալու միտում է նկատվում:Մարզումերի ազատությունն ու հասանելիությունը հնարավորություն են տալիս ունենալ մարզված,առողջ սերունդ՝ պատրաստ զինվորական ծառայության և ոչ միայն: Իրականացվում են զանազան բացօթյա մարզումներ,ՆԶՊ առարկայի դասեր,որոնք ռազմական զանազան հմտությունների ձեռքբերմանն են նպաստում:
Թույլ կողմեր	Խիստ կարևորվում է ձմռանը մարզադահլիճում անհրաժեշտ ջերմային ռեժիմի ապահովումը:Թույլ կողմերից են դասասենյակների անհրաժեշտ քանակի բացակայությունը,հյուսիսային կողմում գտնվող դասասենյակների անհրաժեշտ ջերմային ռեժիմի ապահովումը,եվրոպատուհանների տեղադրումը,մարզադահլիճին կից հանդերձարանների բացակայությունը,դրանցում տաք ջրի և լվացարանների առկայության անհրաժեշտությունը,ճաշասենյակում բնական գազի առկայությունը,գազատար խողովակների օգտագործման ռիսկայնությունը, արևային էներգակիրների ոչ լիարժեք օգտագործումը,ինչպես նաև դպրոցի բակի բարեկարգումը:
Հնարավորու-թյուններ	Մարզադահլիճում անհրաժեշտ ջերմային ռեժիմի ,կահավորված հանդերձարանների առկայությունը կնպաստի մարզական ոգու բարձրացմանը, սանիտարահիգիենիկ պայմաններում առողջ ապրելակերպ վարելուն: Էներգիայի վրա ծախսվող գումարը տնտեսելու նպատակով՝արևային էներգակիրների արդյունավետ օգտագուծում, ինչը թույլ կտա անհրաժեշտ ջերմաստիճան

	ապահովել հյուսիսային կողմում գտնվող դասասենյակներում,իսկ ջերմաստիճանի կայունությունը երկար կպահպանվի եվրոպատուհանների առկայության դեպքում:Իսկ ամռան ընթացքում արտադրված էներգիայի վաճառքից առաջացած գումարը ուղղել առաջնային կարիքների բավարարմանը:Չօգտագործվող տարածքի բարեփոխման արդյունքում դասասենյակների առանձնացում և կահավորում:
Վտանգներ	Վերանորոգման աշխատանքների համար նախատեսված ֆինանսական միջոցների սակավությունը ,այդ թվում՝ բարեգործական միջոցների բացակայությունը: Բնական աղետները՝ երկրաշարժ,ձյան առատ տեղումներ և այլն:

Դպրոցի ֆինանսական գործունեությունը

Դպրոցավարության մյուս կարևոր ուղղությունը նրա բյուջետային հնարավորություններն են: Քանի որ դպրոցը ֆինանսավորումը ստանում է պետական բյուջեից, ապա հաջողությունների և դժվարությունների հիմնական պատճառը այդ միջոցների բավարար և անբավարար լինելն է:Դպրոցի ֆինանսավորման համար կիրառվող ֆինանսական բանաձևը,ցավոք,լայն հնարավորություններ չի ստեղծում,քանի որ աշակերտների թիվը հիմնականում նվազում է:

Ցավոք,աշակերտների թվի պակասելուն զուգընթաց՝ պակասում են նաև դպրոցի ֆինանսական միջոցները:Բնականաբար համամասնորեն կրճատվում են նաև դպրոցապահպանման,ջեռուցման,այլ կարգի ծախսեր,որոնք սակայն մեծ օգուտ չեն տալիս ֆինանսական վիճակի բարելավմանը:

Եթե նույնիսկ էականորեն կրճատենք դպրոցի ջեռուցման ծախսերը,ոչ բարվոք եղանակային պայմանների դեպքում անհնար է խնայել և պահպանել անհրաժեշտ ջերմաստիճան:

Դպրոցի բյուջեի հարստացման ուղղություններից է

Ձեռնարկատիրական գործունեությունը դպրոցի համար լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր է: Ստացված շահույթն անհրաժեշտ է օգտագործել դպրոցի կանոնադրական խնդիրների իրագործման նպատակով:

Դպրոցի հարակից բերքատու այգին կարող է հանդիսանալ ձեռնարկատիրական գործունեության աղբյուր, աջակցել դպրոցական սնունդ ծրագրին (կարտոֆիլի,գազարի, կաղամբի,բազուկի մշակում):

Մոշի, հաղարջի և այլ հատապտուղների թփերի տեղադրում (որոնք մեծ խնամք և ջանքեր չեն պահանջում), ինչի արդյունքում աշակերտները կվայելեն իրենց աշխատանքի արդյունքը, իսկ դպրոցը կհոգա որոշ մանր հոգսեր:

Ինչպես նաև արևային էներգակիրներից ստացված էներգիայի վաճառքից ստացված գումարի նպատակային օգտագուծում:

Դպրոցի ֆինանսական գործունեության վերլուծություն

Ուժեղ կողմեր	Կայուն և ժամանակին պետական ֆինանսավորում: Բարեգործական միջոցների առկայություն:
Թույլ կողմեր	Ֆինանսավորման ոչ բավարար,նվազող չափ:
Հնարավորու-թյուններ	Գործընկերային հարաբերությունների խորացում բարերարների հետ: Նոր բարերարների հետ համագործակցություն: Աշակերտների թվի ավելացում:
Վտանգներ	Անկանխատեսելի ֆինանսական ծախսեր,ֆորս մաժորային իրավիճակներ:

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Ուսումնական հաստատությունը պետք է ունենա նորմատիվ և իրավական համակարգի զարգացման հնարավորություն, իր գործունեության համար անհրաժեշտ իրավական փաստաթղթերի ցանկը և ցանկում նշված բոլոր փաստաթղթերը: Ցանկում նշված փաստաթղթերի օրինակելի տարբերակների հիման վրա պետք է կազմված և սահմանված կարգով հաստատված լինեն իր կառուցվածքին հատուկ փաստաթղթերը:

Ուսումնական հաստատությունում պետք է առկա լինեն պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը, և դրանք պետք է վարվեն կարգերի պահանջներին համապատասխան: Ուսումնական հաստատությունը պետք է արդյունավետ օգտագործի գոյություն ունեցող նորմատիվ փաստաթղթերը, դրանց օրինակելի ձևերը, իր իրավասության սահմաններում մշակի հաստատության համար անհրաժեշտ նոր

նորմատիվ փաստաթղթեր (ներքին իրավական ակտեր) և դրանք կիրառի աշխատանքի ընթացքում: Այս աշխատանքին մասնակցելու հնարավորություն պետք է ունենան հաստատության բոլոր աշխատակիցները: Այդ փաստաթղթերը պետք է լինեն արդյունավետ, ժամանակակից, իրականանալի (իրականացնելի), ապահովեն աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների աճ:
ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը:
Դպրոցի կանոնադրությունը,ներքին կագապահական կանոնները պետք է հասանելի լինեն աշխատակիցներին,խորհրդակցական մարմիններին,կոլեգիալա կառավարման մարմնին:Իրավունքների և պարտավորությունների իմացությունը օրինակելի աշխատանաքի երաշխիքն է:

Վերջերս գործածության մեջ մտան արդեն էլեկտրոնային վարման ենթակա փաստաթղթեր՝ մատյաններ,տեղեկատվական զանազան համակարգեր: Մեր խնդիրն է հետևողական լինել և կանոնակարգել դրանց աշխատանքը ըստ պատշաճի:

2020թ. սեպտեմբերից դպրոցն անցել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության:

Այդ փաստաթղթերն են՝

1. *Էլեկտրոնային դասամատյան:*
2. *Աշխատողի անձնական էլեկտրոնային գործ:*
3. *Սովորողի անձնական էլեկտրոնային գործ:*
4. *Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան:*
5. *Գիտելիքների ստուգման և ավարտական քննությունների արձանագրություններ:*
6. *էլեկտրոնային հաստիքացուցակ:*
7. *Տարիֆիկացիոն մատյան:*
8. *Ուսուցչի բաց թողած և փոխարինած դասաժամերի հաշվառման մատյան:*
9. *Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային եղանակով:*
10. *Տնօրենի տեղակալների, առարկայական մեթոդական միավորումների ղեկա-վարների, դասղեկներիաշխատանքային պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով:*
11. *Սովորողների շարժի մատյան:*

Վերլուծություն

Ուժեղ կողմեր	Դպրոցում առկա են պարտադիր օգտագործման բոլոր փաստաթղթերը և դրանք վարվում են ըստ կարգի: Ներքին կարգապահական կանոնները,կանոնադրությունը,աշակերտների իրավունքներն

	ու պարտականություններն արտացոլող իրավական ակտերը հասանելի են :
Թույլ կողմեր	Երբեմն փաստաթղթերի հետ աշխատողները չեն ծանոթանում վարման կարգին և թույլ են տալիս սխալներ:
Հնարավորու-թյուններ	Ինպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային փաստաթղթեր վարման համար կազմակերպել ուսուցողական պարապմունքներ՝ սխալներից խուսափելու համար:
Վտանգներ	Օրնսդրական խախտումներով լրացված փաստաթղթեր Ներքին կարգապահական այնպիսի կանոնների կիրառում,որոնք ոտնահարում են աշակերտների կամ աշխատակիցների իրավունքները:

Կառավարական և խորհրդակցական մարմիններ

«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 27-րդ կետի համաձայն՝ հաստատության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նախարարությունը,կոլեգիալ կառավարման մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում օրենքով սահմանված կարգով: Հաստատությունում, ըստ ՀՀ կառավարության 2002 թ. Ապրիլի 23-ի N444 որոշման, իրականացվում է կոլեգիալ կառավարում: Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է:

Կոլեգիալ կառավարման մարմնի ընտրության կարգում կատարված փոփոխությունները դրական առաջընթացի միտում ունեն:Այժմ դպրոցն ունի միասնական կոլեգիալ կառավարման մարմին՝ կազմված 19 անդամներից:

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրության 75-րդ կետով ամրագրված է. «Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների ,շրջանավարտների խորհուրդներ: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ»:

Խորհրդակցական բոլոր մարմինները պետք է իմանան իրենց գործունեության ոլորտն ու կանոնները:Լինեն խիստ պատասխանատու:Շատ կարևոր է, որ խորհուրդներն ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները: Այն դեպքում, երբ խորհրդակցական մարմինները գործում են ձևական, չեն կատարում կամ մասամբ են կատարում իրենց պարտականությունները, դպրոցում ուսումնադաստիարակչական, կառավարման և ղեկավարման գործընթացներն էականորեն տուժում են: Դպրոցը դառնում է փակ, դպրոցում իրականացվող գործընթացները ուսուցիչների, աշակերտների և համայնքի համար դառնում են անհասկանալի, և արդյունքում նրանց և դպրոցի միջև առաջանում է անվստահության մթնոլորտ:Երբեմ դրանք ձևական բնույթ են կրում,իսկ դպրոցը շարունակում է կատարել իրեն վերապահված գործառույթները միայնակ,սակայն պահանջատեր են դառնում,երբ որևէ հարցի են առնչվում:

Կառավարական և խորհրդակցական մարմինների վերլուծություն

Ուժեղ կողմեր	Բոլոր ընտրություններ կատարվում են ըստ կարգի: Կառավարման և խորհրդակցական մարմինները գործում են օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում: Պատասխանատու են վերաբերվում իրենց վերապահված պարտավորություններին:
Թույլ կողմեր	Խորհրդակցական մարմիններից՝ ծնողների համար երբեմն անհետաքրքիր է դպրոցին առնչվող խնդիրները: Ծնողը հանդես է գալիս միայն իբրև պահաջատեր:
Հնարավորու-թյուններ	Ստեղծել պայմաններ,որպեսզի ծնողները հետաքրքրված լինեն դպրոցում իրականացվող աշխատանքներով:
Վտանգներ	Կառավարման, խորհրդակցական մարմինների անտարբերությունը:

Աշակերտական համակազմ

Դպրոցի տարրական, հիմնական և ավագ մակարդակների կրթական ծրագրերում ուսումնառում են մոտ 214 աշակերտներ,ուսուցիչների թիվը 22 է: Ուսուցիչ-աշակերտ թվային հարաբերակցությունը կազմում է 1/9: Աշակերտների թվի սակավությունը մի կողմից նվազեցնում է հնարավորինս շատ տաղանդավոր սովորողների բացահայտումը, սահմանափակում պետության կողմից ֆինանսավորումը (դպրոցները ֆինանսավորվում են

աշակերտ-թվով), մյուս կողմից ուսուցիչների կողմից նրանց հետ տարվող անհատական աշխատանքների վրա ավելի շատ ժամանակ ու ռեսուրս կենտրոնացնելու հնարավորություն է ստեղծում: Աշակերտներն ազատ պետք է լինեն իրենց հուզող խնդիրները ուսուցիչների և տնօրենի առջև բարձրացնելու հարցում: Աշակերտական խորհրդի միջոցով սովորողները հնարավորություն պետք է ունենան մասնակցելու դպրոցի կառավարմանը: Այդուհանդերձ, նրանց կրթական կարիքների բացահայտման հուսալի մեխանիզմների սակավությունը այդ մասնակցությունը առայժմ պահում է անվանական մակարդակի վրա: Դպրոցը կարիք ունի կատարելագործելու օժտված աշակերտների մասնագիտական ուղղվածությունները, հետաքրքրություններն ու նախասիրությունները բացահայտող մեխանիզմները, ինչը կազմակերպելու համար դպրոցի ղեկավարությունն ու ուսուցչական կազմը մասնագիտական հատուկ պատրաստվածության կարիք ունեն:

Աշակերտական համակազմի վերլուծություն

Ուժեղ կողմեր	Աշակերտները կազմակերպված են, բավականին ակտիվ են միջոցառումների,մրցույթների ժամանակ: Ակտիվ են շաբաթօրյակներին,խնամքով են վերաբերվում գույքին, մարզադահլիճին: Հարգալից ու հոգատար են հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտների նկատմամաբ: ՏՀՏ տեխնոլոգիաների ուղղությամբ զարգացած են, հետաքրքրված նորարարական ծրագրերով:
Թույլ կողմեր	Գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտների թիվը նվազել է մասնավորապես՝համավարակով պայմանավորված: Բնական գիտությունների նկատմամբ հետաքրքրքսիրության նվազման միտում է նկատվում: Դպրոցում կազմակերպել աշակերտների խրախուսման մեխանիզմ,որը ակտիվացնում և մոտիվացնում է:
Հնարավորու-թյուններ	Բարձրացնել առաջադիմությունը,խրախուսման մեխանիզմներն ուղղել թույլ կողմերի ուժեղացմանը,լրացուցիչ աշխատանքների միջոցով ավելի բարձր ցուցանիշներ գրանցել:
Վտանգներ	Աշակերտների թվի նվազում: Ուսման նկատմամբ անտարբերություն:

Մանկավարժական համակազմը

Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է: Մենք պետք է կարողանանք գնահատել մեր մանկավարժական պոտենցիալը, ինչի համար պետք է ունենանք գնահատման չափանիշներ: Մենք կարող ենք ուսուցչին գնահատել՝ ըստ նրա կրթության և փորձառության, ըստ նրա՝ ուսուցման գործընթացում ունեցած հաջողությունների, ըստ դպրոցի զարգացման գործընթացում նրա ունեցած ներդրման:

Ամասիայի միջն.դպրոցում դասավանդում են թվով 22 մանկավարժեր:Մանկավարժների մեծ մասը վերապատրաստված են կամ ներգրավված են վերապատրաստման դասընթացներին:Ակտիվ են էլեկտրոնային հարթակներում,ակտիվ քննարկումներ են կազմակերպում,հաճախակի փոխադարձ դասալսումներ են իրականացնում:

Մանկավարժական համակազմի վերլուծություն

Ուժեղ կողմեր	Ուսուցչական կոլեկտիվը համալրված է իրենց աշխատանքի մեջ հմուտ մանկավարժներով: Կոլեկտիվը համալրված է ինչպես տեղաբնակ,այնպես էլ Գյումրիից եկող ուսուցիչներով,որոնց ճանապարհածախսը փոխհատուցվում է: Վերապատրաստման, հմտությունների ձեռքբերման միտումներ կան: Հետաքրքրություն կա նորարարական ծրագրերի: Ուսուցիչները դասապրոցեսի ընթացքում կիրառում են ՏՀՏ տեխնոլոգիաներ:
Թույլ կողմեր	Ոչ բոլոր ուսուցիչներն են թարմացնում իրենց գիտելիքները, հիմնականում դա արվում է վերապատրաստումների ժամանակ:
Հնարավորու-թյուններ	Մեծացնել ուսուցիչների ներգրավվածությունը վերապատրաստման,հմտությունների զարգացման դասընթացներին: Հնարավորություն ստեղծել ինքնակրթվելու,զարգանալու նաև

	դպրոցում՝ դպրոցի մասնագետների կամ հրավիրված մասնագետների օգնությամբ:
Վտանգներ	Ուսուցիչների ինքնակրթության պակաս:

Համագործակցություն համայնքի,կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցը, լինելով համայնքի միակ կրթական և մշակութային օջախը, սոցիալական պատասխանատվություն է կրում համայնքի հոգևոր-մշակութային զարգացման, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ պահպանելու, համայնքին գիտելիք և արժեք փոխանցելու հարցում: Այս գիծը դպրոցի գործունեության մեջ մշտապես եղել և կարևորվել է, սակայն մինչ այժմ խնդիր չի դրվել այս ոլորտը ենթարկել համակարգված պլանավորման, մշտադիտարկման և գնահատման: Դպրոցում մշտապես կազմակերպվել և կազմակերպվում են համայնքային նշանակության մշակութային միջոցառումներ (ցերեկույթներ՝ նվիրված հայ մեծերի հոբելյաններին, ազգային, պետական, եկեղեցական տոներին և հիշատակի օրերի նշում, ծառատունկ, շաբաթօրյակներ և այլն), որոնք միտված են աշակերտների շրջանում ազգային ինքնության և քաղաքացիական գիտակցության սերմանմանը, ինչպես նաև համայնքին համապատասխան արժեքների փոխանցմանը: Համայնքը և դպրոցը սերտ կապի մեջ են,համայնքային ցանկացած միջոցառում ,տոնական արարողություն իրականացվում է դպրոցի մասնակցությամբ:Մեծ շուքով նշվում է <Բանակի օր> միջոցառումը, որին մասնակցում են աշակերտները, հեղինակում միջոցառման լոգոն:Իրականացվում է համայնքային շաբաթօրյակ,ծառատունկ և այլն:
Պետք է նշել, որ վերջին տարիներին այդ միջոցառումների լուսանկարները զետեղվում են դպրոցի անունը կրող ֆեյսբուքյան պրոֆիլում:
Դպրոցը համագործակցում է ԿԳՄՍՆ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԿՀՆԱԿ-ի, մարզպետարանի, ԱԻՆ-ի, զորամասերի, ոստիկանության, համայնքապետարանի և այլ կառույցների հետ: Դպրոցի ուսուցիչները և մանկավարժահոգեբանական խումբը զբաղվում է ինքնակրթությամբ, հանրապետական ամսագրերում, միջազգային կրթական կայքերում հանդես են գալիս նորարական նախաձեռնություններով և :

Ուժեղ կողմեր	Համայնքի ղեկավարը մանակցում է սոցիալական հարցերի լուծմանը: Համայնքապետն ու ավագանին հաճախ ոգևորում են աշակերտներին սպորտային հաջողությունների համար, պարգևատրումներ իրականացնում: Անց են կացվում մարզական միջոցառումներ համայնքի

	ներկայացուցիչների և աշակերտների միջև: Համայնքում առկա են ռեսուրսներ աշակերտների զարգացման համար: Ֆուտբոլի նորակառույց դաշտը մեծացրել է ֆուտբոլի նկատմամաբ հետաքրքրասիրությունը:Իրականացվում են մարզումներ: Արվեստի դպրոցում գործում են խմբակներ, ուր սովորել և զանազան փառատոնների են մասնակցել դպրոցի աշակերտները:
Թույլ կողմեր	Մշակութային միջոցառումների սակավություն:
Հնարավորու-թյուններ	Հրավիրել զանազան մշակութային միջոցառումներ՝ազգային երգ,պար: Համագործակցել երիտասարդական կազմակերպությունների հետ:
Վտանգներ	Անտարբերությունը

Ուսումնական միջավայրը

Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է: Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի առկայությամբ և փոխկապակցվածությամբ: Դպրոցը կարող է ուժեղ լինել մի ուղղությամբ, բայց այդ ուժը կթուլանա մեկ այլ ուղղության թույլ լինելու պատճառով:

Դպրոցը պետք է ձգտի, որ՝

1.Դասասենյակները և առարկայական կաբինետները վերանորոգված և կահավորված լինեն նոր գույքով,ապահովված լինի դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ, սարքավորումներով և մուլտիմեդիայով,

2.Դպրոցում ձևավորված լինեն հասարակական այնպիսի հարաբերություններ,որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին:

3.Դպրոցում ձևավորված լինի սովորեցնելու և սովորելու ավանդույթ (մշակույթ):

4.Ծնողների և երեխաների սոցիալական պատկերը պետք է նկարագրվի դպրոցի ուսումնական ծրագրում, արտացոլվի ուսումնական պլանում և իրականացվի ուսումնառության ընթացքում: Այս պահանջը դրված է նաև ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի բաշխման հիմքում: Դրա արդյունքում աշակերտները կունենան ուսումնական հաջողություններ, որոնք տոկոսային հարաբերությամբ ներկայացվում է դպրոցի ներքին գնահատման ժամանակ:

Դպրոցի ուսումնական պլանը դպրոցի հիմնարար փաստաթղթերից է, որը ապահովում է դպրոցի կողմից պետական և հանրային պատվերի կատարումը: Դպրոցի ուսումնական պլանը պետք է կազմվի՝ ըստ սովորողների և ոչ թե ուսուցիչների կարիքների:
Այս առումով կարևորում ենք ուսումնական պլանի համապատասխանեցումը դպրոցում սովորողների կարիքներին:
Դաստիարակությունը պետության կրթական քաղաքականության և կրթության համակարգի ռազմավարական կարևորագույն խնդիրն է, քանզի կրթության գերնպատակն անձի անհատականության կայացումն է:
Դպրոցը պետք է քայլեր ձեռնարկի սովորողների դաստիարակության համակարգի կատարելագործման ուղղությամբ՝

ծնողների ուսուցում կազմակերպելով,
առարկայական դասընթացներում հզորացնելով դաստիարակության մասը,
արտադասարանական միջոցառումներին դաստիարակչական .ուղղվածություններ տալով,
ուսման նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելով,
ծնող-դպրոց կապը հզորացնելով:

Ուժեղ կողմեր	Դպրոցի ներկայիս պայմանները ստեղծում են դասապրոցեսի,մտավոր զարգացման համար նպաստավոր պայմաններ: Ապահով պայմաններ են ստեղծված նաև ներառական կրթությամբ սովորող աշակերտների համար
Թույլ կողմեր	Ապահով պայմաններ ստեղծել նաև ներառական կրթություն ունեցող աշակերտների համար,տրամադրել դասասենյակ և դիդակտիկ պարագաներ,աշխատանքային նյութեր:Ներառական կրթությամբ սովորող աշակերտների ծնողների հետ որոշակի աշխատանքներ տանելու կարիք կա:
Հնարավորու-թյուններ	Հաճախակի հանդիպումներ ծնողների հետ,խնդիրների լուսաբանում:
Վտանգներ	Համայնքի կարիքներին չհամապատասխանող մասնագիտությունների,հետաքրքրությունների ընտրություն:

Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Կրթության որակը կարելի է բարձրացնել՝ բացահայտելով իրավիճակը գնահատելու միջոցով այն փոխելու հնարավորությունները: Անհրաժեշտ է դիտարկել հետևյալ գործոնները.

- ✓ Ուսումնական գործընթացի փաստացի վիճակը:
- ✓ Կրթական գործընթացի կատարողականը:
- ✓ Կրթական գործընթացի արդյունավետությունը:
- ✓ Կրթական գործընթացի որակը կրթական աստիճաններում:
- ✓ Դասերի, ուսումնական միջոցառումների որակը:

Դպրոցում կրթության որակի բարելավմանն ուղղված բազմաթիվ միջոցառումներ են իրականացվում,դրանք երբեմն օրինակելի դասեր են,որոնք նաև փորձի փոխանակության հնարավորություն են տալիս:

Գնահատման տասբալյան համակարգը հնարավորություն է տալիս ճիշտ գնահատել աշակերտի գիտելիքները,գնահատականների արհեստական բաձրացումներ չեն լինում,ուստի ուսուցման արդյունավետության ճիշտ պատկերը տեսանելի է դառնում ոչ միայն առաջադիմությանը նայելով,այլ դասալսումների արդյունքում,ավարտական դասարանների սովորողների ընդունելության արդյունքներով:

Ուժեղ կողմեր	Ուսումնական գործընթացում ներառված են հետաքրքիր ծրագրեր,որոնք բարձրացնում են ուսման որակը:
Թույլ կողմեր	Համավարակի ազդեցությունը,հեռավար դասերը տեսանելի վատ են ազդել ուսման որակի վրա:Առարկայական օլիմպիադաներին մասնակցության նվազում:
Հնարավորու-թյուններ	Սեմինար պարապմունքների միջոցով լրացնել թույլ կողմերը:
Վտանգներ	Ուսումնառության բարձր արդյունքները խրախուսող ծրագրերի պակասը:

Տեխնոլոգիաները և նորարարությունները

Մանկավարժական գիտության, կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակումը: Այսօր արդեն

նորություն չեն դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները, հեռավար ուսուցման ձևերը:
Դպրոցում այսպիսի փոփոխություններ կատարելը պահանջում է ժամանակ և միջոցների ներդրում: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման դասընթացի միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների, ՏՀՏ-ների արդյունավետ կիրառման կարողություններ: Ուսուցիչը պետք է ժամանակ ունենա նոր գիտելիքներ ստանալու, դրանք գործածելու, սխալները ուղղելու և մոտեցումները վերանայելու համար: Դպրոցի վարչական կազմն էլ պետք է կարողանա ուսուցչի աշխատանքը վերահսկել, անհրաժեշտ օժանդակություն ցույց տալ և ապահովել նոր ստացած գիտելիքների և հմտությունների կիրառումը:

Մյուս կողմից՝ ցանկալի է, որ դպրոցն ըստ իր զարգացման առաջնահերթությունների ներդնի գիտականորեն հիմնավորված որևէ նոր, զարգացում ապահովող գիտամանկավարժական նորարարություն: Այն հնարավորություն կտա դպրոցի աշխատակիցներին, աշակերտներին և ծնողներին, ինչպես նաև հիմնադրին գնահատելու դպրոցի ջանքերը գիտական տեսանկյունից՝ դրանով դպրոցը առանձնացնելով մյուս դպրոցներից, օգտագործելով, տարածելով հաջողված փորձի արդյունքները:

Այս հիմնախնդիրները **լուծելու նպատակով** հարկ ենք համարում ՏՀՏ-ների կիրառման միջոցով բարձրացնել ուսուցման արդյունավետությունը, ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի միջոցով ապահովել սովորողների անհատական առաջընթացը:

Ուժեղ կողմեր	Դպրոցում առկա համակարգչային տեխնիկան, <Արմաթ> լաբորատորիան զարգանալու լայն հնարավորություններ են ստեղծում:
Թույլ կողմեր	Ոչ բոլոր աշակերտներն են հետաքրքրված նորարարական ծրագրերով:
Հնարավորու-թյուններ	Համագործակցություն համայնքում հիմնված ռոբոտաշինության ստեղծարար կենտրոնի հետ:
Վտանգներ	Մոտիվացիա չստեղծող մասնագետ:

Դպրոցի գործունեության՝ առաջիկա հինգ տարիների նպատակներն ու խնդիրները

Դպրոցի շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազան

Նպատակ - Ունենալ ակտիվ, նորարական,ժամանակակից կրթություն իրականացնելու պահանջներից, անվտանգության ու առողջ ապրելակերպի նորմերից բխող ենթակառուցվածք և ռեսուրսներ:				
Խնդիր 1.Կաթսայատան, գազատար խողովակների վերանորոգում, խոհանոցի ,մարզադահլիճի գազաֆիկացում				
Գործողություն	ժամկետ	պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
1.Ստեղծելիանձնաժողով,որը կուսումնասիրի վնասի չափը: Մասնագիտական եզրակացության հիման վրա ձեռնարկել հաջորդող գործողությունները:	2023-2024թթ	Տնօրեն	Կոլեգիալ կառավարման խորհրդի կողմից տրված եզրակացություն	Պետական բյուջե,բարեգործական միջոցներ:
2.Գնումների պլանում նախատեսել հաշվարկված գումարը:				
3.Աշխատանքներն իրականացնելիս ներգրավել ծնողների:	2024-25թթ.			
Խնդիր 2. Վերանորոգել և համապատասխան ուսուցողական պարագաներով վերազինել ներառական կրթության իրականացման համար նախատեսված սենյակը:				
Գործողություն	Ժամկետ	պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
1.Ստեղծել հանձնաժողով,որոշել անհրաժեշտ գումարի չափը:	2023 թ.	տնօրեն	Կոլեգիալ կառավարման խորհրդի դրական եզրակացություն:	Բարեգործական միջոցներ
Խնդիր 3.Հանդերձարանների վերանորոգում,կահավորում,գազաֆիկացում(կամ տաք ջրի կաթսաների տեզադրում),լվացարանների տեղադրում:				
Գործողություն	ժամկետ	պատասխանատու	Արդյունքի գնահատման	Ֆինանսավորման եղանակ,

			ան ցուցիչ	չափ
1.Ստեղծել հանձնաժողով,որոշել անհրաժեշտ գումարի չափը:	2024-2025թթ.	Տնօրեն	Կոլեգիալ կառավարման խորհրդի դրական եզրակացություն:	Պետական բյուջե, բարեգործական միջոցներ
2.Կատարել նախագծային աշխատանքներ,հանդերձարանները հագեցնել համապատասխան անհրաժեշտ գույքով:				
Խնդիր 4. Դպրոցի համար լրացուցիչ ֆինանսներ ապահովող կամ ծրագրերին աջակցող աղբյուրների գործարկում:Ձեռնարկատիրական գործունեության ծավալում:				
Գործողություն	ժամկետ	պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
1.Նախաձեռնել ձեռնարկատիրական գործունեություն:	2023թ.	Տնօրեն	Աշխատանքի արդյունավետության պարագայում՝ գործունեության շարունակականություն:	Ֆինանս չի պահանջվում: /բարեգործական/
2. Հաշվարկել եկամուտները կամ որևէ ծրագրի՝ օրինակ դպրոցական սնունդ ծրագրին նպատակային օգնությունը:				
Խնդիր 5. Նկուղային հարկի, որպես ապաստարան կահավորումն ու օգտագործումը արտակարգ իրավիճակների ռազմական դրության ժամանակ				
Գործողություն	ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
1.Ստեղծել հանձնաժողով,որոշել անհրաժեշտ գումարի	2023-24թթ.	տնօրեն	Կոլեգիալ կառավարման խորհրդի	Պետական բյուջե, բարեգործական միջոցներ

չափը:			դրական եզրակացություն	
2.Աշխատանքներն իրականացնելիս ներգրավել ծնողների:				
Խնդիր 6.Չօգտագործվող տարածքների ձևափոխման արդյունքում նոր դասասենյակների առանձնացում:				
Գործողություն	ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
1.Ստեղծել հանձնաժողով,որոշել անհրաժեշտ գումարի չափը:	2024-25թթ.	տնօրեն	Կոլեգիալ կառավարման խորհրդի դրական եզրակացություն	Պետական բյուջե, բարեգործական միջոցներ
2.Կատարել նախագծային աշխատանքներ,դասասենյակները հագեցնել համապատասխան անհրաժեշտ գույքով: 3.Աշխատանքներն իրականացնելիս ներգրավել ծնողների:				
Խնդիր 7.Դպրոցի բակի բարեկարգում				
Գործողություն	ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Կազմակերպման պլանը քննարկել մանկավարժական խորհրդի նիստում	2026թ.	տնօրեն	Կատարված աշխատանք,դրական արդյունքի ապահովում:	Ֆինանս չի պահանջվում: /բարեգործական/
Խնդիր 8. Էներգիայի վրա ծախսվող գումարի տնտեսում				
Գործողություն	ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ

1.Արևային էներգակիրների արդյունավետության բարձրացում :	Մինչև 2023թ.	տնօրեն	Կատարված աշխատանք,դրական արդյունքի ապահովում:	Բարեգործական միջոցներ:
2. Գումարային ճշգրիտ հաշվարկներ		տնօրեն		
Խնդիր 9.Ռուսաց լեզվի դասասենյակի բացում, կահավորում				
Գործողություն	ժամկետ	պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Կազմակերպման պլանը քննարկել մանկավարժական խորհրդի նիստում	2023թ.	տնօրեն	Կատարված աշխատանք, դրական արդյունքի ապահովում:	Բարեգործական միջոցներ:
Նպատակ 2. Դպրոցի զարգացումն ապահովելու նպատակով՝ ֆինանսական կայուն հոսքերի ապահովում:				
Խնդիր 1. Ապահովել հուսալի հարաբերություններ բարերարների հետ.	ժամկետ	պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Գործողություն	2023թ.	տնօրեն		
1. Մշակել հաշվետվողականության ձևեր:				
2.Ֆինանսական աջակցությունները ծախսել նպատակային,ներգրավել ծնողներին:				

Նպատակ 3.Իրավական ակտերի,էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ճիշտ վարում,օրենսդրական նորմերի պահպանում:				
Խնդիր 1.Էլեկտրոնային մատյանների վարման ուղղությամբ դասընթացներ իրականացնել,ուղղորդել ուսուցիչներին.	ժամկետ	պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Գործողություն	2023-2028թթ.	Տնօրեն, փոխտնօրեն,ուսուցիչներ	Ստուգումների եզրակացություն	
1.Հետևողական լինել էլեկտրոնային մատյանների վարմանը ողջ տարվա ընթացքում:				
Խնդիր. 2.Emis.am համակարգում աշխատանքների ժամանակին կատարում	ժամկետ	պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Գործողություն	2023-2028թթ.	տնօրեն	Աշխատանքների վերահսկման եզրակացություն	
1. Emis.am համակարգում օպերատորի կողմից կատարվող աշխատանքների վերահսկում.				
2.Պաշտոնական էջի, mulberry համակարգի փաստաթղթաշրջանառության վերահսկողություն:				
Նպատակ 4. Կառավարման, խորհրդակցական մարմինների համագործակցային, կառուցողական հարաբերությունների ձևավորում.				
Խնդիր 1.Կոլեգիալ կառավարման մարմնի հետ	Ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման	Ֆինանսավորման եղանակ,

հաճախակի հանդիպումների,էլեկտրոնային շփման միջոցով ստեղծել իրազեկված, կայուն շփում:			ցուցիչ	չափ
Գործողություն	2023-2028թթ.	տնօրեն		
1. Կոլեգիալ կառավարման մարմնին ներգրավել դպրոցում իրականացվող միջոցառումներին,իրազեկել ժամանակին և ժամանակին կատարել նախատեսված աշխատանքերը:	2023-2028թթ.			
2. Ծնողներին,մանկավարժներին,իրազեկել իրենց իրավունքների մասին.				
Խնդիր 2 .Ակտիվ,աջակից խորհրդակցական մարմինների առկայություն.	Ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Գործողություն	2023-2028թթ.	Տնօրեն, ԴԱԿ	Հաշվետվություն	
1. Խորհրդակցական մարմիններից հատկապես ակտիվացնել ծնողկոմիտեին,բարձրացնել նրա դերն ու մասնակցությունը դպրոցին վերաբերող կարևոր հարցերի լուծման գործում:	2023-2028թթ.			
2. Սահմանել ժամանակացույց ծնողներին հաշվետվություն ներկայացնելու՝ կատարված աշխատանքների մասին.				
3. Ակտիվացնել և խրախուսել առավել ակտիվ ծնողներին:				

Նպատակ 5.Ունենալ աշակերտակենտրոն, ուսուցման մեջ հմուտ,զարգացած, առաջադեմ գաղափարներով կրթված և դաստիարակված սերունդ, որը պատրաստ լինի գիտության զարգացմանը զուգընթաց՝ նորագույն տեխնոլոգիաների տված հնարավորություններին տիրապետելու.				
Խնդիր 1. Հետևողական լինել աշակերտակենտրոն ուսուցման իրականացմանը, զարգացնել աշակերտներին, ձևավորել նրանց աշխարհայացքը.	Ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Գործողություն	2023-2028թթ.	ԴԱԿ	Հաշվետվություն	
1. Տեսանելի վայրերում փակցնել պաստառներ, որոնք արտացոլեն աշակերտակենտրոն ուսուցման դրական կողմերը և զուգահեռ տանեն հնացած մեթոդների հետ.				
2. Հեռավար դասերի միջոցով ստեղծել հնարավորություն,որ աշակերտները շփվեն իրենց հասակակից այլ աշակերտների հետ այլ երկրներից.	Ըստ կայացման ժամանակացույցի			
				բարեգործական
4. Տարվա մեջ մի քանի անգամ կազմակերպել նպատակային էքսկուրսիաներ, այց Դիլիջանի դպրոց,համագործակցել և ծանոթացնել աշակերտներին աշխարհի առաջավոր փորձին:				
Խնդիր 2.Ազգային գաղափարախոսության,հայրենասիրական	Ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ

դասընթացների սերմանման մեխանիզմ մշակել:				
Գործողություն	2023-2028թթ.	Տնօրեն, ԴԱԿ		
1. Դպրոցում ստեղծել այնպիսի միջավայր, որ թե դասերին թե միջանցքում աշակերտները մշտապես աչքի առաջ ունենան ազգայինն ու հայրենասիրականը.		ԴԱԿ,առարկայական մեթոդմիավորումներ	հաշվետվություններ	
2. Հաճախակի կազմակերպել հայրենասիրական թեմայով շարադրությունների,ստեղծագործական մրցույթներ:				
Խնդիր3.Նորագույն տեխնոլոգիաներին տիրապետման կանոնակարգ մշակել.	Ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Գործողություն	2023-2028թթ.	տնօրեն	Կառավարման խորհրդի դրական եզրակացություն,կատրված աշխատանքների հաշվետվություն:	
1.Չվճարվող,հասարակական կարգով իրականացվող դասընթացներ անցկացնել ինչպես դպրոցի մասնագետների,այնպես էլ հրավիրված մասնագետների միջոցով.				
2.Հետևողական լինել <Արմաթ>լաբորատորիայի աշխատանքի նկատմամբ.				

3. Աշակերտների ամենափոքր նվաճումներն անգամ ուշադրության արժանացնել,խրախուսել.				
Խնդիր 4. Իր իրավունքների և պարտականությունների գիտակ,որոշումներ կայացնելու ունակ սերունդ դաստիարակել.	Ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Գործողություն	2023-2028թթ.	ԴԱԿ,դասղեկներ		
1. Դասղեկի ժամերի ընթացքում ծանոթացնել աշակերտներին իրենց իրավունքներին ու պարտականություններին.				
2. Խրախուսման զանազան մեթոդներ կիրառել.				
Նպատակ 6.Վերապատրաստված,նորարարական գաղափարներով օժտված ուսուցչական կազմ և մանկավարժական աշխատողներ ունենալ: Ուսման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ ձեռնարկել:				
Խնդիր 1. Ուսուցիչների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին,ինքնակրթությունը.	Ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Գործողություն	2023-2028թթ.	Տնօրեն, փոխտնօրեն	հաշվետվություններ	
11.Վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքների կիրառելիություն դասապրոցեսի ընթացքում.				
2. Հետևողականություն կրթական որակի նկատմամբ,հաճախակի դասալսումներ,նոր մեթոդների կիրառման խրախուսում.				
3. Որևէ նորարարության,ինքնուրույն մշակված ծրագիր ներկայացնել:				

Խրախուսման մեխանիզմ մշակել այդ ուսուցիչների համար.				
Խնդիր 2. Ուսման արդյունավետությանն ուղղված միջոցառումների հստակ պլան մշակել.	Ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Գործողություն	2023-2028թթ.	Տնօրեն, փոխտնօրեն		
1, Քննարկել ուսուցման արդյունավետությանն ուղղված միջոցառումների պլանը մանկավարժական խորհրդի նիստում.				
2. Առաջնորդվել քննարկված և հավանության արժանացած պլանով:				
3. Յուրաքանչյուր տարվա ավարտին քննարկել նրա արդյունավետությունը.				
Նպատակ 7. Ամրապնդել համագործակցությունը պետական կառավարման մարմինների,համայնքապետարանի հետ, ինչպես նաև այլ կառույցների,որոնք նպաստում են դպրոցի զարգացմանը:Կայուն պահել համագործակցությունը բարերարների հետ.				
Խնդիր 1. Գործընկերային հարաբերությունների պահպանում.	Ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Գործողություն	2023-2028թթ.	տնօրեն	հաշվետվություն	
1, Սերտ համագործակցել համայնքապետարանի հետ,ներգրավվել համայնքային աշխատանքներում, օգնել և օգնություն ստանալ.				
2. Բարեգործների հետ շփումը,քննարկումները դարձնել հաճախակի և պլանավորել բարեգործական միջոցների տրամադրման դեպքումէ դրանց ճիշտ տնօրինումը.				
Խնդիր 2. Մարզի և հանրապետության առաջատար հանրակրթական, միջնակարգ	Ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ

մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ ձևավորել կայուն ու գործառնող կապեր				
Գործողություն	2023-2028թթ.	տնօրեն		
7.2.1 Կազմել հաստատությունների ցանկ, ուսումնասիրել նրանց ծրագրերն ու հաջողության փորձերը				
7.2.2 Կազմել հաստատությունների հետ համագործակցության համաձայնագրեր, հաստատել կապ և կնքել դրանք:				
7.2.3 Պարբերական այցելությունների ժամանակ առավել հանգամանալից ուսումնասիրել առաջատար դպրոցների հաջողությունները:				
7.2.4 Միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ այցելությունների ժամանակ վերհանել նրանց՝ հաջող ուսումնառության համար դիմորդի մուտքային պահանջները :				
Խնդիր 3. Մարզի և հանրապետության կրթամշակութային ՀԿ-ների, զորամասերի, Եկեղեցու և այլ կառույցների հետ ձևավորել կայուն ու գործառնող կապեր	Ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Գործողություն	2023-2028թթ.	Տնօրեն, ԴԱԿ		
7.3.1 Կազմել մարզի և հանրապետության կրթամշակութային ՀԿ-ների ցանկ, ուսումնասիրել նրանց գործունեությունը և	2023-2028թթ.			

կոնտակտներ հաստատել նրանց հետ՝ առաջարկելով համագործակցության ծրագրեր				
7.3.2 Մարզում գտնվող զորամասերի հետ հաստատել կապեր և քննարկել աշակերտների լրացուցիչ ռազմական կրթության հնարավորությունները	2023-2028թթ.			
7.3.3 Համայնքի հոգևոր սպասավորի հետ քննարկել դպրոց-եկեղեցի համագործակցության, աշակերտների քրիստոնեական դաստիարակության միջոցառումների հետ կապված հարցեր:				
Նպատակ 8. Գույքով և տեխնիկայով ապահովված,հարմարեցված ուսումնական միջավայր: Դաստիարակչական աշխատանքների բարելավում,արդյունավետ մեթոդների կիրառում: Ազգին, հայրենիքին նվիրված ապագա քաղաքացու ձևավորում:				
Խնդիր 1. Դպրոցում առկա ռեսուրսները ուսուցանման նպատակով օգտագործել՝ հասանելի դարձնելով բոլորին:	Ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Գործողություն	2023-2028թթ.	ԴԱԿ, Տնօրեն, փոխտնօրեն		

1, Դպրոցի այժմյան պայմանները թույլ են տալիս ունենալու ֆիզիկապես պատրաստված և գիտելիքներով զինված սերունդ:Նպաստել այնպիսի մեխանիզմների մշակման,որոնք հնարավորություն կտան օգտվել այդ ռեսուրսներից ժամանակին և արդյունավետ:				
2. ԴԱԿ աշխատանքներում,աշխատանքային պլանում ավելի մեծ տեղ և դեր հատկացնել ծնողների հետ տարվող աշխատանքին,սոցիալական տարբեր խմբերում գտնվող աշակերտների հետ տարվող աշխատանքին:				
Խնդիր 2. Դաստիարակության արդյունավետ մեթոդներին ուղղված աշխատանքներ:	Ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Գործողություն	2023-2028թթ.	ԴԱԿ, տնօրեն, փոխտնօրեն		
1. Առաջավոր փորձ ունեցող ուսուցիչների, հեգեբանների, ինչպես նաև բազնմամասնագիտական խմբի աջակցությամբ /ԿԱՊԿՈՒ աշակերտների համար/կիրառել դաստիարակչական այնպիսի մեթոդներ, որոնք				

համատեղելի լինեն տարիքային հոգեբանության հետ:				
2. Աշակերտներին համայնքային			հաշվետվություններ	
ծրագրերում ներգրավելով՝պատասխանատու և ջանացավ դարձնել համայնքի խնդիրների նկատմամբ:Բարձրացնել նրանց ինքնագնահատականը:				

Նպատակ 9.Ունենալ արդյունավետ ուսուցում իրականացնող ուսումնական հաստատություն :				
Խնդիր 1.Զարգանել ուսուցման մեթոդների արդյունավետությունը:Արդյունավետությունը որոշելու հստակ գործիքակազմ մշակել:	Ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Գործողություն	2023-2028թթ.	ԴԱԿ,տնօրեն, փոխտնօրեն		
1. Ուսումնասիրել աշակերտների հաջողությունները կոնկրետ առարկայից,պարզել հետաքրքրության ոլորտը:				
2. Ուսումնառության որակի բարձրացումն իրականացնել կոնկրետ աշակերտի կոնկրետ հետաքրքրությունների վրա հիմնվելով:				
3. Աշակերտին տալ և ստանալ այն,ինչ նա կարող է			Առաջընթացների պարբերական	

յուրացնել,ոչ թե այն ,ինչ մենք ենք ուզում:			ուսումնասիրությունը	
4. Գիտելիքի,ինֆորմացիայի ստանալու բազան թարմացնել,հարստացնել:				
Խնդիր . 2.Ստեղծել հաջողությունների գրանցման մատյան,օգտագործել այն ներքին գնահատում իրականացնելիս:	Ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ	Ֆինանսավորման եղանակ, չափ
Գործողություն	2023-2028թթ.	տնօրեն	հաշվետվություններ	
11 Որևէ մեթոդի,նորարարության գրանցած հաջողությունն անպայման արձանագրել:Որոշել դրական ու բացասական կողմերը:				
2. Աշակերտներին մասնակից դարձնել արդյունավետ մեթոդների կիրառմանը և արդյունավետության գնահատմանը:				

Նպատակ 10 Տեխնոլոգիաների նպատակային օգտագործում,բազայի հարստացմանը միտված միջոցառումներ:

Խնդիր 1.Մասնագիտական գիտելիքների,հմտությունների ձեռքբերմանը միտված միջոցառումներ իրականացնել:

Գործողություն	Ժամկետ	Պատասխանատու	Արդյունքի գնահատման ցուցիչ		Ֆինանսավորման եղանակ, չափ
1. Պարբերաբար վերապատրաստել և մասնագիտական հմտությունների ձոքբերման գործում աջակցել նորարարական տեխնոլոգիաների մասնագետ ուսուցիչներին:	2023-2028թթ.	տնօրեն			
2. Հաճախակի դարձնել ցուցադրական,օրինակելի դասերը,որոնցում կարտացոլվի կատարված աշխատանքները:					
3. Խրախուսել հաջողություններ արձանագրած աշակերտներին:	շարունակական				

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Ֆինանսական ներդրումների պակասը:

2.Ուսուցիչների մասնագիտական պատրաստվածության մակարդակը:

3.Նյութատեխնիկականա բազայի ոչ արդյունավետ օգտագործումը:

4.Ծնողական խորհրդի,խորհրդակցական այլ մարմինների պասիվությունը:

ՌԻՍԿԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Կայուն ֆինանսական ներդրումներ ունենանլու համար անհրաժեշտ է ամրապնդել գործընկերային հարաբերությունները ներդրողների հետ:

2.Նպատակային ծախսել պետական հատկացումները:Կարևորագույն խնդիրների կատարմանը նախապատվություն տալ:

3.Նյութատեխնիկական առկա բազան չպետք է լինի ինքնանպատակ,այն պետք է ծառայի կոնկրետ նպատակի,արդյունավետ գործի՝ ի շահ աշակերտների:

4.Ծնողների ներգրավվածությունը մեծացնել ոչ միայն կատարված աշխատանքները գնահատելու,այլ նաև աջակցելու նպատակով:

5. Դպրոցում կատարվող աշխատանքների կառավարման որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ստեղծել գնահատման արժեքային համակարգ, որի անմիջական աջակցողները պետք է լինեն դպրոցում կրթական գործընթացի մասնակիցները՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողները, վարչական աշխատողները, կոլեգիալ կառավարման խորհուրդը, խորհրդակցական մարմինները:

ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է: Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները, այլ կերպ ասած, դպրոցի զարգացման ծրագրին իրականացնող ու վերահսկող շահառուները (դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններ)՝ գործողությունների արդյունքների բավարարվածության աստիճանը: Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը:

Զարգացման ծրագրում նախատեսված աշխատանքները պետք է հանդիսանան տարեկան աշխատանքային պլանի բաղադրիչ և իրագործվեն երկար կամ կարճ ժամանակահատվածներում:Զարգացման ծրագիրը ենթակա է փոփոխման ըստ անհրաժեշտության: